

ՆԵՊԱԼ

Մայիսի 23-30, 2019 թ.

Բաղրամյան 1 | amenoor@spinnaker.am | +37491323264



amenoor
adventures and expeditions with spinnaker group

Այցելության հիմնական վայրերը –

▪ Աննապուրնա

Իր բարձրությամբ աշխարհում տասներորդը: Այն համարվում է ամենավտանգավոր լեռնաշղթաներից մեկը, որը հաղթահարել հաջողվում է լեռնագնացների միայն 32%-ին: Ու չնայած դրան՝ այս լեռնաշղթա բարձրացողների թիվը չի նվազում: Առաջինը 1950թ-ին Աննապուրնա I-ը հաղթահարել են ֆրանսիացի լեռնագնացներ Մորիս Էրցոգն ու Լուի Լաշենալը



▪ Փուն Հիլ

Վստահաբար ամենատպավորիչ արևածագերը բացվում են հենց այս հեքիաթային լեռից: Այստեղից նաև հրաշալի երևում է Աննապուրնա I գագաթը: Այս աննկարագրելի գեղեցիկ բնապատկերներից բացի կա մի կարևոր բան, որ պետք է անպայման փորձել՝ հայտնվելով Փունհիլում:
Դա **խնձորով թխվածքն է:**

Գոռ Հովհաննիսյան

Խմբի ղեկավար

“**Նեպալը** գույների, համերի, ձյունածածկ գագաթների, կանաչ ջունգլիների ու բարի, միամիտ մարդկանց երկիր է: Առաջին այցից սիրահարվեցի այդ երկրին և վստահ եմ, երբ վերադառնանք այս ճամփորդությունից, դուք էլ եք ունենալու նույն զգացողությունները: Անհամբեր սպասում եմ մեր հանդիպմանը, որ **#amenoor**-ի հետ միասին բացահայտենք առեղծվածային Յիմալայները: ”

नेपाल स्वागत (նեպալա սվագատա) կամ պարզապես բարի գալուստ Նեպալի Հանրապետություն:

Եթե հոգնել եք ստանդարտ ճանապարհորդություններից ու նոր զգացողություններ եք փնտրում, ապա Նեպալը լավագույն ուղղություններից է:

Հիմալայներում գտնվող այս փոքր պետությունն ամեն տարի գրավում է բազմահազար զբոսաշրջիկների, ճանապարհորդների ու արկածախնդիրների:

Մարդիկ այստեղ փորձում են գտնել հոգևոր խաղաղություն և սեփական աչքերով տեսնել Էվերեստն (8848 մ) ու Աննապուրնան (8071 մ):

8 օրվա ընթացքում դուք կհասցնեք լինել մայրաքաղաք Կատմանդուում, ծանոթանալ տեղացիների նիստուկացին, վայելել նեպալյան անուշաբույր թեյն ու ցանկության դեպքում զբաղվել մեդիտացիայով:

Զինվե՛ք հարմարավետ կոշիկներով, ունեցե՛ք ծեգ հետ տաք հագուստ, որովհետև ուղևորության ընթացքում շատ են լինելու քայլարշավները: Իզուր չէ, որ Նեպալը համարվում է տրեկկինգի ամենահայտնի կենտրոններից մեկը:



Թռիչքի տվյալներ՝

23.05 / Երևան – Շարժա 02:55-05:50 / Շարժա – Կատմանդու 14:45-20:30

30.05 / Կատմանդու – Շարժա 10:00-12:40 / Շարժա – Երևան 13:30-16:35

ՕՐ 1

Թռիչք Երևանից, ժամանում Կատմանդու, տեղափոխում դեպի հյուրանոց

Առաջին օրվա տպավորությունները Կատմանդուում կլինեն անմոռանալի, դուք կհամոզվեք, որ նեպալցիները հայերից ոչ պակաս հյուրընկալ են ու հյուրասեր:

Հենց առաջին օրը կծանոթանանք մեր ճամփորդության մանրամասներին, իսկ այն հավատացեք, հագեցած է լինելու:

Երեկոյան կունենանք ազատ ժամանակ ուժերը վերականգնելու և անմոռանալի արկածներին պատրաստվելու համար:

ՕՐ 2

Պոխարա

Մեր առաջին այցը կլինի դեպի Պոխարա քաղաք, որը հայտնի է որպես հիպիների «աշխարհի մայրաքաղաք»:

Պոխարան գտնվում է Ֆեվա լճի ափին: Զբոսաշրջիկները գալիս են այս քաղաք, որպեսզի նախևառաջ այցելեն Շիվայի երբեմնի ապաստանը հանդիսացած կղզին: Նեպալի իրական հմայքը զգալու համար այս հանգստավայր այցելելն, ուղղակի, պարտադիր է:

Այստեղ կարելի է նավարկել, այցելել քարանձավներ և, իհարկե, վայելել շրջակա միջավայրն իր ողջ հմայքով: Պոխարայում կանցկացնենք մեկ ամբողջ ազատ օր և այստեղ էլ կգիշերենք:

Լավ է հնչում, չէ՞:





ՕՐ 3

Հիլ - Գորեպանի

Այսօր դուք կունենաք ձեր կյանքի ամենահիշարժան 6 ժամերը, որոնք կսկսվեն Հիլից մինչև Գորեպանի (2675մ): Առաջին մի քանի ժամը ճանապարհը մի քիչ խրթին է, բայց հետաքրքիր: Հետո արդեն արահետներն ավելի մատչելի են դառնում, այնպես որ, տրամադրվե՛ք:

Հոգնածությունը կթոթափենք Ուլլերի (2070 մ) կամ Բանթանտի գյուղերի ճանապարհին: Որքան ավելի բարձր դիրքերում հայտնվենք, այդքան տեսարաններն ավելի շքեղ են դառնալու:

Ճանապարհին կանցնենք գետի ափին տարածվող սաղարթախիտ անտառներով, որոնց բնությունը բավականին հարուստ է նաև կենդանական աշխարհով: Ամեն քայլափոխի կարելի է հանդիպել կապիկների ու թռչունների տարբեր ցեղատեսակների: Ճանապարհի վերջին հատվածը մեզնից մի քիչ համառություն կպահանջի, բայց մտածեք հանգստի մասին, որը մեզ սպասում է Գորեպանիում:

Օրվա ավարտին դուք արդեն հպարտանալու ևս մեկ առիթ կունենաք, որովհետև հաղթահարած կլինեք ավելի քան 1.1 կմ զառիվեր:

Բայց հավատացեք, այն, ինչ կտեսնենք հաջորդ օրը, միանշանակ արժե, որ հաղթահարեինք այսքան երկար ճանապարհ:



ՕՐ 4

Արևածագ լեռներում

Դուք պատրաստ եք դիմավորել ձեր կյանքի ամենաանմոռաց արևածագը Փուն Հիլում (3232 մ), ուրեմն պետք է ճամփա ընկնել մինչև լուսաբաց, իսկ Փուն Հիլ մարդիկ հասնում են հենց արևածագը դիմավորելու համար: Այս տրեկկինգային արշավը երբեմն հենց այդպես էլ անվանում են «Լուսաբացի արշավ»:

Վերադարձին մեզ սպասվում է համեղ նախաճաշ Գորեպանիում, որից հետո ուղևորություն դեպի Գանդրուկ գյուղ: Գանդրուկում կարող եք այցելել տեղացի Գուրունջ ժողովրդի մշակույթի թանգարան և ծանոթանալ նրանց պատմությանը: Հենց այս գյուղում էլ այսօր կգիշերենք:

ՕՐ 5

Նայապուլ - Պոխարա

Մեր ճանապարհորդության վերջին կետը, որ մեզնից մի փոքր ջանք կպահանջի, կլինի Նայապուլը: Ճանապարհին կունենանք հանգստանալու, մեկ գավաթ թեյ ըմբոշխնելու ժամանակ:

Երեկոյան կվերադառնանք Պոխարա և այստեղ էլ կգիշերենք:

ՕՐ 6

Ազատ օր Պոխարայում

Այսօր կունենաք մի ամբողջ ազատ օր բացահայտելու Պոխարայի թաքնված անկյունները և ժամանակն անցկացնելու առաջարկվող էքսկուրսիաներից մեկում, ինչպիսիք են նավարկություն Ֆեվա գետով, այց քարանձավներ, պարագլայդինգ, բանջի թռիչքներ և այլն:

ՕՐ 7

Վերադարձ Կատմանդու

Նախաճաշից հետո հրաժեշտ կտանք Պոխարային կրկին վերադառնալու ակնկալիքով և կվերադառնանք Կատմանդու:

Երեկոյան կունենանք ազատ ժամանակ տեղի որևէ փաբում միասին նշելու մեր ճամփորդության ավարտը և խմելու հերթական նվաճած լեռան կենացը:

ՕՐ 8

Մեկնում – վերադարձ Երևան

Նախաճաշից հետո կմեկնենք օդանավակայան և մի քանի ժամ անց արդեն կլինենք Երևանում՝ պատրաստ նոր արկածների:



ՓԱԹԵԹԻ ԱՐԺԵՔԸ ՄԵԿ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒՄ Է 695.000 ₴

Փաթեթի արժեքը ներառում է

- ✓ Երկկողմանի ավիատոմս Երևանից
- ✓ Անհատական երկկողմանի փոխադրում օդանավակայան-հյուրանոց
- ✓ 7 գիշեր երկտեղանի հյուրանոցային սենյակներում (Կատմանդուում 4*) և գյուղական կացարաններում նախաճաշով
- ✓ Կատմանդու - Հիլ - Պոխարա - Կատմանդու տեղափոխում
- ✓ Երեքանգամյա սնունդ բացի 1, 6 և 8 օրերից
- ✓ Հայ ուղեկցորդի ծառայություններ
- ✓ Անգլալեզու ուղեկցորդի ծառայություններ
- ✓ Բեռնակրի ծառայություններ
- ✓ Ազգային պարկերի թույլտվությունների վճար
- ✓ Մուտքի տոմսեր
- ✓ Քայլարշավային քարտեզ
- ✓ Վիզա
- ✓ Ապահովագրություն



Հետաքրքիր փաստեր

Նեպալի մասին

- Նեպալի տարածքում առկա են բոլոր կլիմայական գոտիները, որ գոյություն ունեն Երկիր մոլորակի վրա՝ արկտիկականից մինչև արևադարձային:
- Նեպալի կարգախոսն է՝ «Մայրը եւ հայրենիքը թանկ են երկնային թագավորությունից»:
- Մարդիկ, ովքեր նվաճել են Էվերեստը, կարող են ամբողջ կյանքում անվճար սնվել Rum Doodle ռեստորանում:
- Նեպալի ազգային դրոշը ուղղանկյուն չէ, ինչպես աշխարհի մյուս բոլոր երկրներինը: Այն բաղկացած է երկու եռանկյունիներից:
- Միայն վանականները կամ նրանց ծնողները կարող են դիպչել նեպալցիների գլուխներին, որովհետև մյուս բոլորի կողմից դա անվայել ժեստը է համարվում:
- Նեպալցիները տավարի միս չեն ուտում, քանի որ կովը այստեղ համարվում է սուրբ կենդանի:
- Նեպալում ձեռքսեղմումը չի համարվում ողջույնի ժեստ:
- Նեպալում թույլատրվում է բազմակնությունը, իսկ երկրի հյուսիսում՝ բազմամուսնությունը:
- Նեպալի լեռնային շրջաններում տեղացիները հավաքում են Յարցագումբա տեսակի սունկ, որ մեկ կիլոգրամը արժե մինչև 25 հազար եվրո: Բժշկության մեջ այս սունկն օգտագործվում է բազմաթիվ հիվանդությունների, այդ թվում՝ քաղցկեղի բուժման համար:
- Նեպալում մեկ ոչ աշխատանքային օր կա՝ շաբաթ օրը: Բացի այդ, այնտեղ այժմ ոչ թե 2019 թվականն է, այլ 2075-ը:





Բաց մի թողեք այս ամենը սեփական աչքերով տեսնելու բացառիկ հնարավորությունը:
Նեպալը սպասում է ձեզ:

Բաղրամյան 1 | amenoor@spinnaker.am | +37491323264